

### 4.2. Զբոսաշրջիկություն

#### 4.2.1. Միջազգային զբոսաշրջիկությունը 2001թ. հունվար-դեկտեմբերին

ՀՀ ԱՎԾ-ն 2001թ. մայիսից գործողության մեջ է դրել «Միջազգային և ներքին զբոսաշրջիկության մասին» պետական վիճակագրական հաշվետվային ձևը, որով հանրապետությունում 2001թ., առաջին անգամ, Զբոսաշրջիկության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) մեթոդաբանությանը<sup>1</sup> համապատասխան, տեղեկություններ են հավաքագրվել միջազգային (ներգնա և արտագնա) և ներքին զբոսաշրջիկության վերաբերյալ:

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2001թ. հունվար-դեկտեմբերին հանրապետություն են ժամանել 123262 զբոսաշրջիկներ<sup>2</sup> նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 84461-ի դիմաց կամ հավելաճը կազմել է 45.9%: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջիկության նպատակով հանրապետությունից մեկնել է 109976 մարդ<sup>2</sup>, որը 2000թ. նկատմամբ նվազել է 1.1%-ով կամ 1274 մարդով:

#### Միջազգային զբոսաշրջիկության որոշ ցուցանիշներ

(մարդ)

	2000 թ.					2001 թ.					2001թ. %-ով 2000 թ. նկատմամբ
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	ընդամենը 2000թ.	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	ընդամենը 2001թ.	
Միջազգային զբոսաշրջիկներ ընդունած <b>հյուրանոցների քանակը</b>	10	12	13	14	14	15	20	26	26	28	200.0
<b>Ժամանողներ</b>											
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՁՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ	12839	18896	27752	24975	84461	19035	27583	44380	32264	123262	145.9
նրանցից տեղավորվել են՝											
<b>հյուրանոցներում</b>	4097	5300	8785	5048	23230	3397	7930	12888	6517	30732	132.3
<b>հուրանոցներում հաշվառված</b> (բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն) <sup>1</sup>	8742	13596	18967	19927	61231	15638	19653	31492	25747	92530	151.1
<b>Սեկնողներ</b>											

<sup>1</sup> Միջազգային զբոսաշրջիկության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը նախորդ տարիներին իրականացվել է միայն որոշակի վիճակագրական նպատակների՝ մասնավորապես վճարային հաշվեկշռի կազմման աշխատանքներն իրականացնելու համար: Ընդ որում, նախորդ տարիներին հետազոտությանը ընդգրկված կազմակերպությունների ցանկը բավարար չափով ներկայացուցչական չի եղել, այդ իսկ պատճառով բերված տվյալների համադրելիությունն ապահովվելու նպատակով 2000թ. համար ևս կիրառվել է նոր մեթոդաբանությունը և ընտրանքային դաշտը:

<sup>2</sup> Զբոսաշրջիկ է համարվում ցանկացած անձ, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, ուսուցման, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով:

<sup>1</sup> Բերված տվյալների հաշվարկման համար հիմք է հանդիսացել սահմանային կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ Զտղաքցիական ավիացիայի գլխավոր վարչությունից, ՀՀ ԱՄՆ-ից, ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեից և ՌԴ սահմանային զորքերից: Հարկ է նշել, որ ավտոտրանսպորտային միջոցներով ժամանողների հաշվառումը իրականացվում է սկսած 2000թ. մայիսից:

	2000 թ.					2001 թ.					2001թ. %-ով 2000 թ. նկատ- մամբ
	I եռամ- սյակ	II եռամ- սյակ	III եռամ- սյակ	IV եռամ- սյակ	ընդա- մենը 2000թ.	I եռամ- սյակ	II եռամ- սյակ	III եռամ- սյակ	IV եռամ- սյակ	ընդա- մենը 2001թ.	
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՁՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ	19235	24267	39457	28291	111250	20905	28684	34691	25696	109976	98.9
<i>ուղևորությունը կազմակերպ- վել է զբոսաշրջիկական կազմա- կերպությունների կողմից</i>	1992	2367	3165	1650	9174	892	1067	1204	1260	4423	48.2
<b>զբոսաշրջիկական կազմա- կերպությունների կողմից չհաշվառված (ինքնուրույն)</b>	<b>17243</b>	<b>21900</b>	<b>36292</b>	<b>26641</b>	<b>102076</b>	<b>20013</b>	<b>27617</b>	<b>33487</b>	<b>24436</b>	<b>105553</b>	<b>103.4</b>

Ըստ հյուրանոցային տնտեսություններից ստացված հաշվետվությունների տվյալների, 2001թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ այցելած զբոսաշրջիկների 22.0%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, այդ թվում 11.8%-ը՝ Ռուսաստանի Դաշնությանը, 4.4%-ը՝ Կրաստանին, իսկ 5.8%-ը՝ ԱՊՀ այլ երկրներին: Ժամանողների 78.0%-ը բաժին է ընկնել ոչ ԱՊՀ երկրներին, որից՝ 30.2%-ը ԵՄ երկրներին (այդ թվում 9.4%-ը՝ Ֆրանսիային, 5.3%-ը՝ Գերմանիային, 5.1%-ը՝ Մեծ Բրիտանիային, իսկ 10.4%-ը՝ ԵՄ այլ երկրներին), 20.5%-ը՝ ԱՄՆ-ին, 5.8%-ը՝ Իրանին, 3.4%-ը՝ Լիբանանին, 2.8%-ը՝ Կանադային, իսկ 15.3%-ը՝ այլ երկրներին:

**Ջրոսաշրջիկության ցուցանիշներն ըստ նպատակի, 2001թ.**

(մարդ)

	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	2001թ., ընդամենը	Տեսակարար կշիռը
<b>Մեկնողներ</b>						
Ընդամենը զբոսաշրջիկներ <sup>2</sup>	892	1067	1204	1260	4423	100.0
նրանցից՝ ըստ նպատակի <sup>2</sup>						
գործնական	315	536	86	176	1113	25.2
հանգիստ և ժամանց		12	825	898	1735	39.2
կրթություն	0	0	0	0	0	0.0
բուժում	0	0	0	0	0	0.0
այլ	577	519	293	186	1575	35.6
<b>Ժամանողներ</b>						
Ընդամենը զբոսաշրջիկներ <sup>1</sup>	3397	7930	12888	6517	28965	100.0
նրանցից՝ ըստ նպատակի <sup>2</sup>						
գործնական	2046	4232	5919	2311	14508	50.1
հանգիստ և ժամանց	925	3018	5931	1767	9874	34.1
կրթություն	30	21	70	56	177	0.6
բուժում	42	63	92	57	254	0.9
այլ	354	596	876	2326	4152	14.3

<sup>2</sup> Բերված տվյալներն արտացոլում են միայն զբոսաշրջիկական կազմակերպությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկներին:

<sup>1</sup> Տվյալները ստացված են միայն հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում տեղակայված զբոսաշրջիկների վերաբերյալ:

<sup>2</sup> Բերված տվյալներն արտացոլում են միայն զբոսաշրջիկական կազմակերպությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկներին: